XVI

ՀԱԿՈԲ ԿԱՐՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVII Դ.)

Մեծ մասամբ ժամանակակցի ստույգ վկայություններ է ընդգրկում Մատենադարանի № 8184 ժողովածուի 5բ—11ա էջերում գտնվող ժամանակագրությունը, որից բացի ժողովածուի մեջ տեղ են գտել նաև.

ա. Հակոբ Կարնեցու հոր՝ Գեորգ քահանայի կենսագրությունը, որ գրել է Հակոբ Կարնեցին։

բ. Հակոբ Կարնեցու «Շինուած Կարնոյ քաղաքին» աշխատությունը։

գ. Էջմիածնի կաթողիկոսների աթոռակալության ցանկը, որը սկսվում է Բարսեղ Անեցու մահվան (1113 թ.) հանգամանքների բավական մանրամասն շարադրումից։ Ցանկը հասնում է մինչև Հակոբ Ջուղայեցու ժամանակները և ընդհատվում։

Այս ժամանակագրությունն սկսվում է 1482 թվի դեպքով և հասնում մինչև 1672 թ.՝ Հակոբ Ջուղայեցու Կ. Պոլսից վերադառնալը։ Հաճախ հանդիպում են այնպիսի դեպքերի հիշատակություններ, որոնք շարադրված են նաև «Շինուած Կարնոյ քաղաքին» աշխատության մեջ։ Նկատի ունենալով այս, ինչպես և № 8184 ժողովածուի մեջ գտնվող Հակոբ Կարնեցու կողմից գրած իր հոր կենսագրությունը, կարծում ենք, որ ժամանակագրությունն էլ պատկանում է Հ. Կարնեցու գրչին։

Այս ենթադրությունը հաստատվում է ի միջի այլոց նրանով, որ ժամանակագրության մեջ հեղինակը, հիշելով 1655 թ. Կարինի ավագ երեց Գեորգի մահը, վերջինիս համարում է «հայր մեր»։ Սկզբում կարծում էինք, որ այդ դարձվածքը գործածված է հոգևոր հայր իմաստով, սակայն նույն Գեորգ երեցի կենսագրության մեջ, որը շարադրել է Հակոբ Կարնեցին, եղբոր՝ Մաղաքիայի և այլոց խնդրանքով, մի շարք դեպքերում գործածել է «վասն հօրն մերում» (վերնագրում), «հայրն մեր Գէորգ», «հայրն մեր» դարձվածքները։ Այստեղից էլ ժամանակագրությունը առանց տատանվելու վերագրում ենք Հակոբ Կարնեցուն։ Այսպիսով հիմա է պարզ դառնում, որ Հակոբ Կարնեցին «Շինուած Կարնոյ քաղաքին» աշխատությունից բացի գրել է իր հոր՝ Գեորգ երեցի կենսագրությունը և կազմել սույն ժամանակագրությունը, որոնք մինչև հիմա չկային հրապարակի վրա։ Այդ պատճառով էլ վերջիններս մուծեցինք սույն ժողովածուի մեջ։

Հեղինակը ժամանակագրության սկզբի մի շարք դեպքերն ընդհանուր առմամբ վաղակատար անցյալով է հիշում. օրինակ՝ «ՌԻԴ Լէլա փաշան Արզրում մէչիտ է շիներ» կամ «ՌԿԷ փետրվարի ամսոյն Յակոբն և Սուգիասն են ծնեալ» և այլն, իսկ ՌՀԶ (1627) թվից հետո դեպքերը հիշվում են անցյալ կատարյալով կամ ներկա ժամանակով, օրինակ՝ «Ապազան ապստամբեցաւ», «կամէին», «կարէին», «ոչ կարաց» և այլն։ Ոճական այս տարբերությունները մեզ ենթադրել են տալիս, որ Հակոբ Կարնեցին 1627 թվից սկսած ժամանակակից դեպքերն է արձանագրել, իսկ մինչ այդ տեղի ունեցած դեպքերի հիշա-

տակությունը գրավոր աղբյուրներից օգտվելու կամ լսածի արդյունքն են։ Ժամանակագրության մեջ կան դեպքեր, որոնք պատմության համար քիչ նշանակություն կարող են ունենալ (օրինակ՝ ոմն Անանիայի քահանա ձեռնադրվելու վկայությունը և այլն), սակայն դրանց կողքին կան և շատ հետաքրքիր տեղեկություններ, որոնք հաստատվում են այլ աղբյուրներով։

Ժամանակագրության մեջ հիշված շահ Իսմայիլի 1501 թվին վարած պատերազմների մի էջը, որը վերաբերում է Բաբերթի 6-ամսյա անօգուտ պաշարմանը և, որը կատարվել է շահ Իսմայիլի զորավարներից մեկի՝ Ղարաճայ Էլիազի գլխավորությամբ, հաստատվում են այլ վկայություններով, որոնք վերաբերում են այլ վայրերում, դարձյալ 1501 թվին մղած կռիվներին։ Այդ աղբյուրներից մեկը Բարսեղ Արճիշեցու տարեգրության վկայությունն է։[1]

Ավելի հետաքրքիր է ժամանակագրության այն վկայությունը, որը վերաբերում է Հակոբ Ջուղայեցու 1664 թվին Երուսաղեմ մեկնելուն։ Հակոբը ճանապարհորդում է 1664 թվին և հասնում մինչև Թոխաթ, սակայն այստեղ լսում է, որ Էջմիածնում տեղի են ունենում գժտություններ, ստիպված վերադառնում է Էջմիածին։ Թե ի՞նչ գժտություններ են տեղի ունեցել Էջմիածնում այդ ժամանակ, մեզ պարզում է Զաքարիա Սարկավագը,[2] սակայն վերջինս չի նշում այդ դեպքերի տարեթիվը։ Օրմանյանը, օգտվելով Զաքարիա Սարկավագի վկայությունից, գրում է. «... Յակոբ կաթողիկոս կանուխեն (1665 թ. առաջ— Վ. Հ.) ալ Կ. Պոլիս երթալու միտք մը ունեցած էր...»։[3]

Մինչդեռ միայն ժամանակագրությունն է մատնացույց անում այդ ճանապարհորդության տարեթիվը, բացի այդ, ըստ ժամանակագրության Հակոբ Ջուղայեցին գնալու էր ոչ թե Կ. Պոլիս, ինչպես կարծում է Օրմանյանը, այլ Երուսաղեմ։

Հակոբ Կարնեցու ժամանակագրությունը հնարավորություն է տալիս ոչ միայն պատմական որոշ դեպքեր մանրամասը շարադրել, այլև վերջինիս օգնությամբ ճշտել որոշ ուսումնասիրողների սխալ հետևությունները։

Հայագետներից Ա. Խաչատրյանը,[4] Հակոբ Կարնեցու կյանքը դնում է 1622—1662 թվերի շրջանում, մինչդեռ ժամանակագրության մեջ ունենք պարզ ցուցում, որ Հակոբ Կարնեցին ծնվել է 1618 թվի փետրվարին։ Նկատի ունենալով ժամանակագրության վերջին եզրը՝ 1672 թ., կարծում ենք, որ նա մինչև 1672 թ. դեռ կենդանի է եղել։

---

[1] Վերոհիշյալ տարեգրությունը տես ներկա հրատարակության 126—129 էջերում։

[2] «Զաքարիայ Սարկաւագի պատմագրութիւն» 1870, Վաղարշապատ, հատոր երկրորդ էջ 72։

[3] Օրմանյան «Ազգապատում», էջ 2562։ Օրմանյանը այս դեպքի առթիվ օգտագործել է միայն Զաքարիա Սարկավագի վկայությունը, իսկ վերջինս իր վկայության մեջ Հակոբ Ջուղայեցու Կ. Պոլիս ուղևորվելու մասին ոչինչ չի նշում, ընդհակառակը, նրա վկայությունը հաստատում է ժամանակագրությունը, այնտեղ ասված է. «...Կաթուղիկոսն Յակոբ բերեալ ձեռնասուն աշակերտն իւր Իսահակ վարդապետ Մակուեցի՝ արար եպիսկոպոս, և եղի տեղի իւր Աթոռակալ և Տեղապահ և ինքն ելեալ գնաց ի սուրբ Երուսաղէմ (ընդգծումը մերն է Վ. Հ.) «Պատմագրութիւն» հատ. Բ, էջ 71—72։ Իսկ թե ինչպես է Երուսաղեմ մեկնելու վկայությունը դարձել Կ. Պոլիս մեկնելու ենթադրություն, մեզ մնում է անհասկանալի։

[4] «Հնուն պատմիչների վկայությունը հին Հայաստանի ոսկեհանքերի և նրանց տեղի մասին» (Պետ. Համալսարանի Տեղեկագիր № 1, 1925 թ. էջ 50)։ Խաչատրյանի բերած տվյալը օգտագործել է պրոֆ. Հ. Աճառյանը «Հայոց անձնանունների բառարան» Երևան, 1946, հատոր 3, էջ 511։ Սակայն Տեղեկագրի հրատարակիչ Կ. Կոստանյանը հարցին ավելի ճիշտ է մոտենում, նա գրում է «Հ. Կարնեցին նկարագրել է դեպքեր, որոնց ժամանակն ընկնում է 1622—1662 թվերի մեջ» (Տեղեկագիր էջ 3)։

Թվականութեանս մերում ՉԼԱ (1482) մայիս ամ[ս]ոյ ԻԶ (26) Արզրում երկիրս այնպէս սաստիկ ձուն է եկեր, որ ոչխարն և տաւարն մնացեալ են շարաթով ի տուն և խոտ են կերեալ։ Տանուտէրն եկաւորն է եղեալ, Թ (9) և տասն երակի տարի է եղեալ, և կէտ սուգականն ի ԿԴ (64) տարին է մտեալ։ 5

Ի թվականիս մերոյ ՉԾ (1501) զօրացաւ ազգն Պարսից, որ Սոֆի ասեն, որ է Ղզըլպաշ, որոյ անուն թագաւորին շահ Իսմայիլ, ելեալ ի Սպահանայ և եկեալ էառ զԹարվէզ։ Եւ առաքեաց զօրս բազումս երկիրս Հայոց՝ գերեաց. տուերևաց և տսպատակեաց բազում գիւղք և զաւառք։ Եկն և եհաս ի գաւառն Խախտեաց, որ է Բարերթ և պաշարեաց զամուր բերթն նորա և արար խսար Հ (6) ամիս և ոչ կարաց առնուլ զնա, ել և կորեաւ. և անուն գլխաւորին էր Ղարաճայ էլիաղ։ 10

Ի թվականիս մերոյ ՉՁԴ (1535) սաստիկ շարժ եղև Երզնկա քաղաքն և երկիրն ամենայն, որ Կապոսի վանից Լուսաւորչի եկեղեցոյ գուպէթն թռաւ և այլ բազում շինուածք տապալեցան և մարդիկք կորեան։ 15

Ի թվականութեանս մերում Ռ (1551)-ն սուլթան Պայեայզիտն և Սէլիմ եկեալ են Արզրում. փոքր եղբայր Պայեազիտն փախեր է Ղզըլպաշն, և Սէլիմն եկեալ ոչ է գտեալ[1] զեղբայրն. բարկացեր է ի վերայ Այեազ փաշին. Եւ ելեալ Սէլիմն գնացեր է Համիթ և զԱյեազն կապանօք և բոկոտամբ տարեալ է ի դուռն Ամթա կախեալ է, և ապա ինքն մտեր է յԱմիթ։ Եւ տէր Մկրտրիչն[2] տղա է եղեալ։ 20

Ի թվականութեանս ՌԺԸ (1569) Վէզիրօղլին ի դուրսն պարիսպէ պտըտեր, Արզրում։ 25

Ի թվականութեանս ՌԻԴ (1575) Լէլա փաշան Արզրում մէչիտ է շիներ։

Ի թվականութեանս ՌՂԴ (1595) տէր Դէո[ր]գն[3] Արզրում է եկեր։ 30

Ի թվականութեանս մերում ՌԾԵ (1606) սով սաստիկ է եղեար,[4] որ մարդ զմարդ, շուն և կատու կերեալ են այս վերին աշխարհս բովանդակ՝ Ցանկիւրու և Ղայսարու հետ մինչև ի Թարվէզ, Վան և Բաղէշ, Համթայ սանճախն, բոլորն Դ (3) տարի։ Աստուած ազատէ այնպիսի պատուհասէ զամենայն մարդ։ 35

Կաթողիկոսն Էջմիածինն Ցուրհայեցի Սրապիոնն է եղեալ

ե Մելքիսէթն բաղում փորձանս և չարչարանս է հաներ ի վերայ
նորայ շահ Աղասի հրամանաւն։ Այս այն Աղասն է, որ Բասի-
նու հետ դաղդս Հայոց սուրիուն արար տարաւ ի Սպահան։ || Իսկ 6բ
Սրապիոն կաթողիկոսն մաղապուրծ եկն Ցամիթ. և նստան կա-
5 թողիկոս Աւետիս և Դաւիթն։ Եւ Մելքիսէթ կաթողիկոսն եկեալ
դնաց յետոյ ի Լէհ և անդ վախճանեցաւ։ Սրապիոնն ի Ցամիթ
էառ վախճան. և ելաց Դաւիթն մինչև որ Մովսէս վարդապետն,
որ տիրեաց Էջմիածնա և յետոյ եղև կաթողիկոս։ Ընդ այն ժա-
մա[նա]կն Թարվէդ, Շրվան և Շամախի բովանդակ Օսմանցոց էր,
10 Ըստամպօլա թագաւորին, բայց յետոյ դամենայն շահ Աղասն էառ։

Ի թվականի[ս] մերում ՌԿ (1611) տէր Դէսբդն և տէր Անա-
նիան քահանայ ևն եղեալ, ձեռամբ Սահակ եպիսկոպոսին, տոաջ-
նորդ քաղաքիս և Լուսաւորչի վանիցն։

Ի թվականութեան ՌԿԷ (1618) փետրվարի ամսոյն Յակոբն
15 և Սուդիասն ևն ծնեալ։

Ի թվականիս մերում ՌՀ (1621) յոյժ մահ է անկեր Արզրու-
ում և շրջակա բոլորքն։ Եւ ծանի Ըստամպօլա սառեր է այն-
պէս,[6] որ շուն ե մարդ է անցեր Դալաթիա։

Եւ Աղազա փաշան, ի մէջ Արզրուում քաղաքիս, զԱճայմօղ-
20 լանին հաւատոյ վերայ կրակն ձգեաց։ Եւ նա ամենեին ոչ ի
սպառնալեացն երկեաւ և ոչ խոստմանցն ունկն եդիր, այլ արի-
արար եմուտ ի հուրն, որ տղայքն || ի դէմն կուլային և հաղարք 7ա
հաղարաց հայ և տաճիկ շրջապատեալ հայէին տեսանել զկա-
սարումն. և նայ ուրախութեամբ եմուտ ի հուրն և ձայնեաց
25 ասելով, «ալլայի սէվոան, ալլայ չաղբրուանդ։[7] Եւ ամենեքեան
ձայն արձակեցին և նոյն ժամայն էառ զկասարումն, վասն ան-
ուանն Քրիստոսի, զի Նուրիճան էր անունն, նորին յիշատակն
աւրհնութեամբ եղիցի։[8] Եւ ի դիշերին պահապանք բերթին տե-
սին ակնարև լոյս, պայծառ ծագեալ ի վերայ ոսկերացն և ընդ
30 առաւօտն բերին զմնացեալ ոսկերսն ամենայն և եդին իսիր
տապանի ի մէջ եկե[ղ]եցուն, որ կա մինչև ցայսօր ի պահպա-
նութիւն քաղաքիս։

Ի թվականութեանս մերում ՌՀԶ (1627)-ն Աղաղն ապրս-
ամբեցաւ ի թագաւորէն։[9] Զի առաքեաց թագաւորն սէրասքէր
35 Դիշլանկ Հուսէյինն ԺԲ (12) փաշաով և ԵՌ (5000) ենկիչարի ընդ
նմա։ Եւ եկեալ բանակեցան ի մէջ դաշտին և կամէին խաբկա-
նօք զԱղաղն ի դուրս հանել ասելով թէ՝ «եկ երթիցուք ի վերայ
Ախալցխոյ» և նա խորամանկութեամբ պատրաստութիւն եսես.
և իմումն[10] գիշերի ել և գնաց և կոտորեաց զամենեսեան և զԴիշ-
40 լանկն ըմբռնեաց և բերեալ ի մէջ բերթին || չարաչար մահուամբ 7բ
սատակեցոյց. և զկոզոպուաս նոցա զամենայն էառ և բաղմացոյց
զօրք բաղում։ Եւ քինախնդիր եղեալ սուլթան Օսմանին, որ են-
կիչարիք ըսպաննեցին ի Ստամպոլ և դրին զեղբայրն Մուրատ
թագաւոր։

45 Եւ ինքնագլուխ եղեալ Աղաղայն աիրեաց վերին աշխար-
հիս և բերթորեաքն ամենայն, մինչև ի Սեբաստիայ. այնպէս

հուքմ և հրաման ունէր, որ Դ (4) կողմն քուրթ և կամ գող ոչ
երևէին, Ա (1) կին Ա (1) աւուր ճանապարհ կու գնայր, զի են-
կիչարոց չար ժամա[նա]կն ոչ կին, ոչ լսմուկ տղա քաղաքէն ելա-
նել ոչ կարէին, և ի մէջ քաղաքին ևս ըմոլոնեալ պղծէին զի
5 աստուած յարոյց զԱպաղան, որ իբրև զոչխար զենեաց զնոսա
չարաչար։ Եւ ելեալ ԿՌ (60000) ձիաւորօք գնաց յԱնկուրիա
ոլաշարեաց զբերթն և պատերազմեցաւ. և ոչ կարաց առնուլ զնա
և դարձաւ Արզրում։ Եւ ի հասանել [Ռ]ՀԼ (1628) թվականին
առաքեաց թագաւորն Զէթոնցի հայի աղա, Խալիլ փաշա վէզիրն
10 ի վերայ Ապաղին բաղում զօրօք. և Ապաղան զերկիրն ամե-
նայն այրեաց և ինքն ամրացաւ ի բերթն, բաղում պարարա-
ութեամբ։ Եւ Գ (3) ամիս խոտարեաց զնոսա և պատերազմեցաւ ‖ 8ա
և ոչ կարաց առնուլ զբերթն, մինչ որ ձիւն եկն ի վերայ գլխոյ
նորա, ել և կորեաւ։ Եւ Ապաղան ընթացաւ զկնի նոցա և բա-
15 զումս կոտորեաց և էառ զամենայն թօր և ջէպախանա և երեր
ի բերթն Արզրումայ։

Ի թուականիս մերում ՌՀԸ (1629) սուլթան Մուրատն ես-
պան զԽալիլն և արար առնաւուտ Խոսրով փաշան վէզիր և
նա ի ձեռս նորա ԴՇՌ (300,000) ոգի։ Եւ դարձեալ առեալ
20 զօրսն Խոսրով բաղում պարարաութեամբ և եկն ի վերայ Արզ-
րումա կրկին անդամ։ Եւ Ապաղան փակեաց զդրունքն ամենայն.
և պատերազմեցան մինչև ի սուրբ Խաչն։ Եւ զօրք Ապաղին օր-
ըստ օրէ փախեան ի գուրս և մնաց շիւար, զի բերթն մեծ էր և
ոչ կարէր պահել, այնպէս քակեցին թօրով զԵրզնկու դռան վե-
25 րևն, միջի պարիսպն, ըռճէ ի բուռճ, որ գետինն հասուցին, մինչ
որ անճարացեալ Ապաղան առաքեաց ելչի և արար խաղաղու-
թիւն ընդ Խոսրովին. և ել ի բերթէն իւր մարդոքն և խաղնաոքն
և եղև որդէգիր Խոսրովին։ Եւ շինեաց զքակեալ պարիսպն Խոս-
րով և եդիր փաշա զԹայեարն Ուրհտեցի. և ետ հէտի շէրիֆ և
30 կանչեցոյց Գ (3) օր, ‖ թէ Ապաղին բանքն մի այլ ևս յիշեսցի։ 8բ
Եւ առեալ Խոսրով զԱպաղայն և գնաց ի Սամսպոլ և սուլթան
Մուրատն խլաթեաց և ետ Գուտում։

Ի թվականիս մերում ՌԶ (1631) եղև կաթողիկոս Մովսէսն[10]
և արար բաղում կարգս և ուղղութիւնս և էջմիածին նոր նո-
35 րոգեաց և ԲՇ (200) միաբանիւք և բաղում վարդապետս եհան։
Եւ Սրսոյ Քացախ կաթողիկոսն եկն Արզրում ի տեսութիւն Մով-
սէսին։

Ի հասանել ՌՁԲ (1633) թվին վախճան էառ Մովսէսն[11] և
մեր առաջնորդ աստուածարանն Մինաս,[12] որ էր աշակերտ Կե-
40 ղեցի մեծ Ղուկասին, և եդաւ ի մէջ ատենին, նաև Սրսոյ կա-
թողիկոսն՝ Մինաս[13] գնացեալ Երզրնկա քաղաք և էառ անդ վախ-
ճան և եղին մերձ առ Կեղեցի Ղուկաս վարդապետին։

Ի թվականիս մերոյ ՌՁԲ (1633) յաւուր Ցայտնութեան մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի նստաւ կաթողիկոս տէր Փիլիպոսն։[14]

45 Ի թվականիս մերոյ ՌՁԳ (1634) Հոռոմք զատիկն ծռեցան։
Տէր Մկտրիչն վախճան էառ[15] և եղև տէր Գէորգն աւաղ էրէց։

504—16

ՌՁԴ (1635) սուլթան Մուրատն եկն ԴՃՌ (400,000) ոգով Վարդավառին[16] և գնաց էառ զԵրևան Ը (8) օրն.[17] և հասեալ ի Թարվէզ, || էանց ի Վան և գնաց ի Ստամպօլ։ 9ա

ՌՁԵ (1636) ձմեռն շահ Սէֆին եկն և էառ զԵրևան[18]

5 ՌՁԶ (1637) Արզրումու բերթին մէջն ժամատուն շինեցին։

Ի թվականիս ՌՁԸ (1639) սուլթան Մուրատն գնաց ի Պաղատատ և էառ զնա և գնացեալ ի Սաամպօլ մեռաւ և եղբայրն Իպրահիմն թագաւորեաց ՌՁԹ (1640)։

Ի թվականիս ՌՂ (1641) Յակոբն և Սուլիասն քահանայ

10 եղեն. Մկտրիչն և Ղևոնդն տղա եղեն և յետ տարոյ միոյ Սողոմոնն։

ՌՂԲ (1643) Զաֆարն թէհրիր երաւ Արզրումայ փաշալիս և օգոստոս ամսոյն մահ անկաւ։ Էմին Ամիրիանն, Իղնատիոսն և բազում կտրիճ մեռան աստուած ողորմեսցի նոցունց. ամէն։

15 Ի թվականին ՌՂԴ (1644) Մուսաֆա վէզիրն [ս]պաննեցին ի Ստամպո[լ] և Ջիւան Ղափուճին եղև։

ՌՂԷ (1648) մեծ տէրտէրն[19] Էջմիածին գնայ։ Եւ օգոստոսի ամսոյն սուլթան Իպրահիմն [ս]պաննեցին ի Ստամպօլ և զորդին դրին թագաւոր Մէհմմատ անուն Թ (9) տարեկան։[20]

20 Եւ աւր ըստ օրէ զարգացաւ և յա[յ]ժ հանճարեցաւ։ Թնամբ նրւաճեաց զաշխարհս ամենայն և Լ (30) տարի պատերազմեցաւ ընդ ֆռ || անկին Վէնէտիկոյ, և զծովն Ովկիանոս ելից զրամով և 9բ
լաշով, և էառ զԿրիտէս կղզին թէմով և վիճակով և Է (7) բերթով զամենայն ՌՃԺԹ (1670) թվականին և զարձաւ։ խնդութեամբ յԱտրանայ։[21]

Ի սոյն թվականիս ՌՃԺԹ (1670) առաջնորդ մայրաքաղաքիս Արզրումա Սարգիս աստուածաբան և ձայնեղ վարդապետն, որ արար շատ շէնք և երեր աղրիւր ի դուռն Մուտուռկու[22] վանիցն, և ինքն հանգեաւ ի նոյն վանսն և եղաւ իղիր տապանի օգոստոսի ամսոյ ի ԺԵ (15)։

Ի թվականիս մեր ՌԺԺԱ (1662) Ըստամպօլա Դ—Ե (4—5) եկեղեցիքն հայի և հոռոմի քակեցին։ Արզրում ևս ամբ զրկեցին, բերթի միջի եկեղեցին մէջիդ արարին և ամենայն քրիստոնէից գլուխն սեաւ կտակ անցուցին։

35 Ի թվականիս մերոյ ՌՃ (1651) Փիլիպոս կաթողիկոսն եկն և գնաց Երուսաղէմ։

Ի թվականիս մերոյ ՌՃԲ (1653) Մուրթազան էմին Պետրոսն զուր տեղն կախեաց. եւ Ղազար եպիսկոպոսն վախճան էառ։ Փիլիպպոս կաթողիկոսն եկն Երուսաղէմայ. եւ մեր եկեղեցին

40 գոգք մտան։ Եգիտ Մուրթազայ փա[շա]ն և ըմպոնեաց՝ զերկոքին ցրցեաց և զվեցին ձեռն կարեաց և ուրախութիւն անպատմելի եղև ազգիս Հայոց, որ այսչափ թուրք սատակեցան և կորեան։

Ի թվականիս մեր ՌՃ և Դ (1655) էառ վախճան կաթողի-

45 կոսն Փիլիպպոս[23] ի սուրբ էջմիածինն, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։ Եւ յետ նորա եղև Յակոբն || կաթողիկոս Հայոց։ 10ա

Եւ ի սոյն ամի վախճանեցաւ հայրն մեր, աւագ էրէց աէր Գէորգն
ե որդին իւր խոճայ Մելքոնն և եղաւ ի դուռն քաղաքի Արզրու-
մայ եկեղեցւոյ, յիշատակ նոցին աւրենութեամբ եղիցի. ամէն։

Ի թվականիս մերոյ ՌՃԺԱ (1662) Մուրթազան ի Մուսուլ
5 |գլուխն| կտրեցին և Ուռուստամ փաշայն ի Ախբլցխայ գլուխն
կտրեցին։

ՌՃԺԲ (1663) գիսաւոր աստղ մի երևեցաւ յերկինս աշնան-
մտէն մինչև ի դատիկն.[24] բայց շատ պակասութիւն եղև ընչից
աղգիս Հայոց վաճառականաց։

10 Ի թվականիս մերոյ ՌՃԺԴ (1664) եկն Ցակոբ կաթողիկոսն
Արզրում գնալ յԵրուսաղէմ և հասեալ ի Թոխատ։ Ընկերակիցքն
և աշակերտ վարդապետքն իւր էջմիածինն շփոթեալ,[25] ընդ իրեար
աղմկեցան և դարձուցին զկաթողիկոսն յաթոռն իւր։[26] Եւ լուաւ
Եղիազար վարդապետն, ճարտասան առաջնորդ սուրբ Երուսաղէ-
15 մայ, եկն ի Հալապ և եղև կաթողիկոս իքնագլուխ և կամէր ընդ-
դիմանալ և հակառակիլ Ցակոբայ կաթողիկոսին։ Եւ լուեալ զայս
Մարտիրոս վարդապետն ի Կաֆայ ել և եկն։

ՌՃԺԴ (1665) թվին գնաց էջմիածինն էառ զկաթողի-
կոսն Ցակոբ և տարաւ ի Ստամպօլ և անկան ի դուռն թագա-
20 ւորին. || զի ոմանք վարդապետք և ժողովուրդք ի կողմն Ցակոբա 10բ
կաթողիկոսին եղեն և ոմանք Եղիազարու[27] եղեն և անկան ի
ղրունս վէզիրին և թագաւորին, և տային դրամ քէսայով, զի
տարի մի տային զԵրուսաղէմ Եղիազարին և առնէին բաղում
քէսա և միւս տարին տային Մարտիրոսին և առնէին բաղում
25 քէսա, մինչ որ Բ (2) կողմն ևս անկան ի ներքոյ բաղում պար-
տուց։[28] Այսպիսի աղմկով և զմիմիեանս խաբելով երևելիս բա-
րեկամ և սէր քարոզելով և ի ներքողոյն գործելով մինչ է (7)
տարի, որ անկան Բ (2) սուրբ աթոռքն՝ էջմիածին և Երուսաղէմ,
ի ներքոյ պարտուց, որ եղև մինչ ՐՃ (200) քէս[ա] դրամ։ Ցետ
30 է (7) ամին ոչ եղև սրտիւ հաշտութիւն և կրկին էառ Եղիազարն
Երուսաղէմ և ոչ եղև հաշտութիւն ընդ Մարտիրոսին։ Եւ ձանձ-
րացեալ կաթողիկոսն Ցակոբ ել ի թվականիս մերոյ ՌՃԻԱ (1672)
ի Ստամպօլա և եկեալ ի սուրբ աթոռն իւր էջմիածինն։[29]

Ի թվականիս մերոյ ՌՃԺԶ (1667), նոյեմբեր ամսոյն ել 11ա
35 շարժ սաստիկ երգնկան, որ քաղաքի Բ (2) եկեղեցին և բազա-
նիք, տունք և ապարանք տապալեցան, անթիւ հայ և տաճիկ
կորեան ի ներքոյ հողին, զոր տէր աստուած Արզրումա քաղաքս
հանդերձ երկրեաւն աղատեալ փրկեաց, զի սակաւ մի եհաս առ
մեզ, որ մինչ էաք ի ժամ աղօթից և կատարէաք զերեկոյի ժամն
40 սակաւ մի երերեալ և եթող, և օրն էր չորեքշաբթի։[30]

Դարձեալ ՌՃԺԷ (1668) յաւուր նաւակատեաց Ցայտնութեան
տեառն մերոյ ի լուսանալ առաւօտին, որ յասելն փառք ի բար-
ձունս, ահաղին որոտմամբ և սաչիւն դողաց երկիրն Շամախու,
Գանձայու և Թիւլիսու և Երևանա։ Ապա ումմեք երկրի ՉԵաս ոչ
45 եղև, բայց միայն Շամախու, տեսցուք եղբայրք և զգոշասցուք,
որպէս ասէն մարգարէն՝ «ո՞ հայի երկիր և տա գոգալ սման» և

այլն. զի եղև յայանի և մեծ հրաշք, որ աղօթից զօրութիւնն
ցուցաւ յայտնապէս, զի որչափ ժողովուրդ, որ կային ի Շամա-
խոյ քաղաքին յեկեղեցին ընաւին ոչ քար մի անկաւ, ոչ Ա (1)
մարդոյ զարար եղև, այլ արտաքոյ եղեալքն ընդ հողով կորեան
5 և կործանեցան։[31]

* * *

Մատենադարանի № 8184 ժողովածուի մեջ գտնվում է նաև Հակոբ Կարնեցու հոր՝ Գեորգ քահանայի կենսագրությունը։ Ինչպէս երևում է կենսագրության վերնագրից, Հակոբ Կարնեցին այն գրել է իր եղբոր՝ Մաղաքիայի,[1] իր որդիների և ազգականների խնդրանքով։ Կենսագրության վերջում հեղինակը խոստովանվում է, որ այն գրել է. «...ոչ թէ ամբարհաճ բարուք և կամ վասն գովութեան, այլ ի խրատ և ուսումն թոռանց նորին և մանկանց սրբոյ եկեղեցոյ քահանայից և սարկաւագաց, որք ականայտեսք էին վարուց նորա»։

Կենսագրականում բացի Գեորգ քահանայի կյանքին վերաբերող տեղեկություններից, կան նաև պատմական տեղեկություններ՝ ջալալիների, 1606 թ. սովի, Կեղի քաղաքի և մի շարք անձնավորությունների մասին։ Նկատի ունենալով, որ այս կենսագրականը Հակոբ Կարնեցու մի նոր, մինչև այժմ անհայտ աշխատությունն է և բովանդակում է պատմական հետաքրքիր տեղեկություններ, տեղավորեցինք սույն ժողովածուի մեջ Հակոբ Կարնեցու ժամանակագրության առընթեր։

---

[1] Հակոբ Կարնեցին Մաղաքիայի խնդրանքով գրել է նաև «Տեղագիր վերին Հայոց» աշխատությունը։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՄՆ ՀՕՐՆ ՄԵԾՈՒՄ ԳԷՈՐԳԱ ՓԱՀԱՆԱՅԻՆ Է, ԹԷ ՈՐՊԷՍ Է ԵԿԵԱԼ Ի ԹԷՈԳՈՒՊՕԼԻՍՍ ԵՒ ԿԱՄ, ՈՐ ՅԵՐԿՐԷ Է ԵՂԵԱԼ, ՀԱՌԵՑԻՑ ՓԵՋ ԿԱՐԳԱՒ ԵՂԲԱՅՐ ՄԱՂԱՔԻԱ ԵՒ ՈՐԳԻԲ ՄԵՐ՝ ՍԿՏՐԻՋ, ՍՈՂՈՄՈՆ ԵՒ ՊԼՈՒՋ ՅՈՎԱՆՆԷՍ ԵՒ ԱՋԳԱԿԱՆՔ ՄԵՐ 1ա

Զի եղեալ է հայրն մեր ի բնիկ զիւղաքաղաքէն Կեղոյ[37] որդի բարէպաշտ ծնօղաց զաւակ։ Անուն հօր իւրոյ Միքաք և մօրն՝ Դուլինար։ Եւ առեալ է նոցա աստուած Բ (2) որդիս՝ Դաւիթ և Մարգարէ։ Եւ մայրն առաւել երկիւղած է եղեալ յաստուծոյ և սիրօղ ժամատեղաց և մեծատան դուստր։ Եւ յաւուր միում գնացեալ է եկեղեցին ապրիլի ԻԳ (23) և լուեալ է զասմաւուրաց պատմութիւնն բազմաչարչար նահատակին Գէորգա և խնդրեալ է յաստուծոյ և սրբոյն Գէորգա, թէ լինիցի ինձ այսուհետև զաւակ արու, եդից զանուն նորա Գէորդ և նուիրեմ յաստուծոյ։ Եւ տէր տա զհայցուածս նորա։ Եւ յետ ժամանակաց յղանա և ծնանի զաւակ երկոքեակ ի մի փորոյ ՌԼԲ (1583) թվականին. միննարու և միւսն էգ և մկտրեալ զնէ անուն տղային Գէորդ և քվերն Մարիամ։ Եւ աստուծով սնանին երկոքին յոյժ։ Եւ ըստաստն Գիւլինար աչ ըստինն տղային տա հանապազ և ձախն՝ աղչրկանն։[38]

Եւ լինին տղայքն է (7) ամեա և տա Գէորդ յուսումն գրոց առ անուանի վարպետն Մակար։ զի ընդ այն ժամանակն յար և նման երաժիշտ և բանիբուն ոչ է եղեալ շրջակա բոլորքս նման Մակարա, զի Կեղեցի Ղուկաս վարդապետն, որ է ի շարս փիլիսոփայից վարդապետաց և է վարպետ Սրապիոն կաթողիկոսին և Մովսէսին, զի Մակարն և Ղուկասն միատեղ են պաշտեցեալ։ Զի այն ժամանակն յոյժ չէն եղեալ է Կեղի, բովանդակ հայք և անուանիք և դասատուն վարդապետաց։ Եւ Գէորդ պատանին լինի ԲԺ (12)-ամեա և կարդա Զ (6) կանոն Սաղմոսն և զՑիսուս որդին բուն. և բարեպաշտն Միքաք խնդայ ընդ կարդալ տղտին և առնու նմա Ցիսուս որդի և շարակնոց։ Եւ ինքն հանապազ ի յառ և ի տուր վաճառականութեան շրջի՝ գնալով Արզրում և ի Ցամիթ։ Եւ ի ժամանակին յայնմիկ պեղծ ազգն քրդաց ապրստամպ և Ջալալի բազում են եղեալ, որ զմիմեանց զերկիրն ասպատակեն, և թալնեն և գողանան եղեր հանապազ և յանցս ճանապարհաց և ի լերինս բազումք որսան և ըսպանեն, որ դեռևս սովորութիւն նոցա այն է, որ մինչև Բ (2) և Գ (3) անգամ զերկիրն Կեղու և Բալվա թալաներ և աւիրեալ են, զի դեռ ॥ ևս Օսմանցիք ոչ են եղ-

1բ

2ա

նալ այսչափ հղօր զօրութեամբ և նուաճեալ զամենայն աշխարհ,
զի անսիրացեալ է ի թագաւորաց։ Վասն որոյ տարի վերայ տա-
րոյ աւերումն է սկսեալ և ողութիւն հացի։ Եւ բարեպաշտն Մի-
թրաք ելեալ կա Արզրում և առնու ապըրշմեղէնս և ասպալեղէն
5 ե ցորեանս, զի տարցէ ի տուն, և գնասցէ ինքն Համիթ, վա-
ճառել զինչս իւր, բաղում ընկերօք։ Եւ մինչ հասեալ են երկիրն
Հանտերձու,[32] բաղում զօրք Մարաց հասեալ են ի վերայ նոցա
և զամենեսեան որախորոշ արեալ են և զինչս ամենեցուն տա-
րեալ են։ Եւ դուժ գան աղաղակի նոցա, հասանի ի Կեղի։ Եւ ելան
10 տեարք մեռելոցն ընդառաջ և Գուլինարն ևս չորեսին աղայոքն
գան ի գանդատ Արզրում առ փաշայն, զի թերևս ողորմեսցի
ընդառաջ մեռելոցն և դադրեցէ զապրանքն նոցա։ Եւ առաքէ փա-
շայն բաղում զօրք և ոչ գտանեն։ Եւ նկիալքն ոմանք կու գնա
աշխարհն իւրեանց և կէսք մնացեալ են ասդ։ Եւ մայր Գէորգին
15 ասէ՝ «որդեակք երկիր մեր ողութիւն է, կացցուք ասդ տարւոյ
մի և յետոյ գնասցուք»։ Եւ այսու պատճառաւս մնացեալ լինին
ասդ։ Եւ Գէորգ պատանին հանապազ ընթանա եկեղեցին և աւագ || 2բ
էրէցն տէր Մկրտիչ սեսանէ զԳէորգ աջողակ և փոյթ առ ի
յուսումն, առնու յաշակերտութիւն։ Եւ ձայնէ զմայրն և որդիա-
20 ցուցանէ գնա։ Իսկ մայրն Գէորգի ասէ՝ «զխոստումն, որ առ
աստուածն և ուրախութեամբ առեալ ձեռանէ աղային և տա ի
տէր Մկրտիչն ասելով՝ «ի քեզ յանձնեցի Գէորգս առաջի աս-
տուծոյ, որպէս ի հնումն Աննա ետ Սամուէլ Հեղի քահանային և
ևս տայ քեզ։ Եւ Գէորգ մնացեալ առ ոտս տէր Մկրտչին և պաշ-
25 տէ զՍաղմոսն և զարակա[ն]ն ամենայն։ Եւ մայր Գէորգին
հարսնացուցանէ զաղջիկն և ինքն Բ (2) որդոքն վախճան առ-
նու։ Եւ մնա Գէորգ միայն և օր ըստ օրէ անկանի սով մինչ, որ
թվականն Ռ և Ե լինի,[33] այնպէս սաստկանա սովքն ամենայն
երկիր, որ շուն և գկատուն և մարդ զմարդ ուտեն, որ ինքն տէր
30 Գէորգն պատմէր, որ բաղում նեղութիւնն եկեալ էր ի վերայ
նորա։ Ապա տէրտէրին թարկն ոչ էր տուել, նոյնպէս տէր Մկրտ-
ըիչն առաւել սիրէ զնա։ Եւ Գէորգն ճշմարտութեամբ ծառայէ
նմա և օր ըստ օրէ զարդանա, և հասեալ ի չափ հասակի ուսանի
գիր տէր Մեսրոպէն, որ էր որդի տէր Մկտրիչին։ Եւ լինի ջա-
35 հրնկալ և փոյթ || [34] ի սաղմոսերգութիւնն, և ի սպասաւորու- 3ա
թիւնն եկեղեցոյ և քահանայիցն։ Եւ տէր Մկտրիչն քան զորդի
առաւել սիրէ, զի յաւուր նեղութեանն օգնեաց նմա և փեսայ-
եայցուցանէ զԳէորգ և տա եղբօր թոռն իւր Մանանայ անուամբ,
յոյժ անմեղ և այսպէս մտանէ ի կարգ աշխարհի։

40 Եւ ի հասանել ՌԿ (1611) թվականին հաւանութեամբ քահա-
նայիցն և ժողովրդոցն ձեռնադրի քահանայ։ Եւ տայ աստուած
նմա զաւակ՝ յետ ու առաջ է (7)։ Բ (2) որդին և Ա (1) աղջիկն
մեռնի և մնա Գ (3) որդի՝ Մելքոնն, Յակոբ և Մաղաքիա և աղ-
ջիկ մի Գուլինար անուն։ Եւ տէր Գէորգն օր ըստ օրէ յառաջանա
45 ի քահանայութիւնն և ժիր ի ժամակարգութիւնն մինչ որ եհաս
թվականն ՁՐ[35] և վախճանեցաւ Մանանայն, որ ըստուգ գոր-

ծով զանուն ելից, որ Մանանայ էր, զոր տէր աստուած ողորմեսցի նմա։ Եւ Ճեայ տէր Գէորգն այրի է. եւ առաւել ստացաւ սրբութիւն և սանակացութիւն. մինչ որ էանց տարի մի և վախճանեցաւ տէր Մկտրիչն յաւուր Ցայանութեան տեառն մերոյ,[39]
5 որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։ Զի հաւանութեամբ քաղաքիս և հրամանաւ Փիլիպպոս || կաթողիկոսին եղին զաեղի 3բ
վարպետին իւրոյ զաէր Գէորգն, աւաղ էրէց մայրաքաղաքիս Արզուրում։ Եւ նա հով[վ]էր զժողովուրդն փառաւորապէս։ Եւ. որդիք նորա զարգացան և եղեն յոյժ վարժ զրոց և. եղանակաց
10 տաղի և շարականի և հնազանդ հօրն իւրեանց, հլու և հպատակ ամենեցուն։ Եւ եմոյծ զնոսա ի կարգ աշխարհի և եա նոցա ասաւած ուստերս և զստերս՝ բաղում թոռունք Գէորգ քահանային, որ ծաղկեցաւ հոգով և մարմնով, որ բնաւին պակասութիւն ոչ ունէր մարմնաւոր և թէ հոգևոր։ Եւ մեծ որդին Մելքոնն եղև
15 այր կատարեալ և խորհրդական իմաստուն և յոյժ վաճառական և անուանի քէրվանպաշի և խոճայ. և Մաղաքիտն ընդ նմա. և Յակոբն և Ձեռնասուն աշակերտն իւր՝ Սուդիատն առաքեաց, աւաղ էրէցն տէր Գէորգ, ՌՂ (1641)[39] թվին էջմիածինն առ. կաթողիկոսն Փիլիպպոս, և նայ Ձեռնաղբեաց զնոսա քահանայ. և եղեն
20 նոքա այր կատարեալ ի կրթութիւնս աստուածային գրոց հին և նոր կտակարանաց. եկին և. եղեն ժամասացք ի դէմս հօրն իւրեանց Գէորգա։ Եւ ընդ այն ժամանակն[40] || ժողովուրդքն ամենեքեան ընչեղք և փարթամք էին գոյիւք և իշխանք բազում. էմին և զօմբուկչի, զի այնպէս ջերմ սէր ունէին ի վերայ քա- 4ա
25 հանայից և եկեղեցաց, որ բնաւ ոչ հրաժարին վարդապետաց կշտէն, մինն ելանէր և միւսն մտանէր, կերակրօք և ողորմութեամբ և հարցաքննութեամբ գրոց, զի զեռևս պիղծ Օսմանցիքն* ի քուն էին, այսպիսի չար շլթաս և շամաթայ չունէին։ Եւ ինքն տէր Գէորգ յաջող ժամու հանգիպեալ և բարի կարգաւորութեամբ
30 հովուեաց զժողովուրդն իւր և արաբ բազում կարգս և ուղղութիւնս եկեղեցոյ և եղև ՀԲ (72) ամաց կատարեալ թվով. և Մելքոնին եղեն ամք ԽԲ (42) և ցաւք պատեցին զնա ի յաղիսն, որ է քէսմա, և բազում աւուրս հիւանդացաւ և բարի խոստովանութեամբ վախճան էառ առաջի հօրն իւրում։

35 Ի թվականիս մերոյ ՌՃ և Դ (1655)-ն, ապրիլի Բ (2)-ն զոր տէր աստուած ողորմեսցի նմա և զորդին Սողոմոնն ընդ յերկայն աւուրս արասցէ։ Եւ եթող սուգ մեծ եղբարցն և ծերունի հօրն իւրոյ Գէորգա, որ անմխիթար լայր և ասէր՝ «և ես մեռայց ընդ որդոյ || իմոյ սիրելոյ»։ Այլ ոչ մեկուսացաւ եկեղե- 4բ
40 ցուն, մինչ որ լուաւ աստուած աղօթից նորա և յետ Գ (3) ամսոյ ցաւք մահու պատեցին զինքն Ը (8) օրեա. և յարաժամ պատարագէր և յանկողնի ևս հաղորդեցաւ և խօսէր և աւրհնէր զամենեսեան քահանայքն և ժողովուրդքն սիրով կեալ ընդ միմեանս։ Եւ ամենեքեան ժողովեալ էաք ընդ նմա և ունկն դնէաք խօսիդ
45 նորա հանգեալ։ և էառ վախճան այնպէս հեշտ, որպէս խնձոր մի հանէ ոք ի ծոցոյ իւրմէ, և ուրախութիւն մեր ի տրամութիւն

* Բնագրում «Օսմանցիքս» ձևով։

փսխեցաւ. և լացաք դմեզ ժամս, զի բարձաւ խորհրդականն ի
մէջոյ և եթող զմեզ որբ։ Փանզի էր հայրն մեր Գէորգ անձամբն
երկայն և լայն, կարմիր երես և երկայնաքիթ, ճաղատ և բոլո-
բամօրուս, սևակն և փառահեղ, ամենայն բարութեամբ լի։ Հան-
5 զաւ հայրն մեր, ի սոյն թվականի ՌՃ և Դ (1655), յուլիս ամ-
[ս]ոյի Բ (2). ի նոյն աւուր յուրում ծննալն էր և վախճանե-
ցաւ, զի ինքն ի կենդանութեանն իւրում ասէր հանապազ թէ՝
ահա յաւուր Ներսէսի աօնին եմ ծնեալ, ի նոյն օրն ‖ և էառ վախ- ՅԱ
ճան։ Եւ բարձեալ տարաք զմարմին սաղմոսիւք և պատարա-
10 գօք և եղաք ի զուռն միարան սուրբ Աստուածածնի. որոյ յիշա-
ատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն։ Ապա այս, որ գրեցի ոչ թէ
ամբարհաճ բարուք և կամ վասն գովութեան, այլ ի խրատ և
ուսուցմ Թոռանց նորին, և մանկանց սրբոյ յեկեղեցոյ քահանա-
յից և սարկաւագաց, որք ականայաեսք էին վարուց նորա։ Բեր-
15 ցեն զբարի վարս նորին առ իւրեանս և ինքեանք պատմեսցեն
զնանմնացից իւրեանց, զի և նոքա ժառանգողք լիցին մասին
ի լոյս Ն. Փրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնագրում գրված է «գտնեալ» ձևով, այնուհետև «ն» տառը չնշված է. այդ ձևով էլ պահեցինք։

2. Բնագրում ամենուր «մկտրել» և «Մկտրիչ» ձևով։

3. Տեր Գեորգը Հակոբ Կարնեցու հայրն էր։

4. Թերևս «եղեալ» ձևով։

5. Հակոբ Կարնեցին է։

6. Համաձայն Ա. Դավրիժեցու, այս տեղի է ունեցել 1621 թ. հունվարի 14-ին (էջ 638)։

7. Թուրքերեն նշանակում է «Դու առածուն սիրիր, առածուն էլ կանչիր» (պետք է լինի առտծուն սիրողը, թող աստված կանչի՝ «Ալլահի սևվան, ալլահ չաղրուուն»։

8. «Եղիցի» բառը բնագրում գրված է 7ա էջի այ լուսանցքում։ «Հայոց նոր վկաներրդ» ժողովածուի մեջ Նուրիջանի նահատակությունը չի հիշված։

9. Կարինի Ապաղա փաշայի ապստամբության և նրա վարած կռիվների մասին տես նաև Գր. Կամախեցու ժամանակագրության մեջ,էջ 184, 212—233։ Հմմտ. Ա. Դաւրիժեցի, էջ 73, 638—640։

9ա. պետք է լինի «ի նոյն» կամ «ի միում»։

10. Ա. Դավրիժեցու համաձայն Մովսես Տաթևացին կաթողիկոս է օծվել 1629 թ. հունվարի 13-ին (էջ 439, 640), իսկ Ալիշանը նշանակում է 1630 թ. («Այրարատ», էջ 231)։

11. Մովսես Տաթևացին ըստ Ա. Դավրիժեցու մահացել է 1632 թ. մայիսի 14-ին (էջ 439), Ալիշանը նշում է՝ 1633 թ. մայիսի 14-ին (նույն տեղ, էջ 231)։

12. Սույն Մինասը և Գր. Կամախեցու մոտ հիշված Մինաս վարդապետ Կարնեցին, կարծում ենք, միևնույն տնձնավորություններն են։ (Հմմտ. «Ժամանակագրութիւն», էջ 180, 181, 168, 349, 390, 391)։

13. Ասի կաթողիկոս Մինասի մասին հետաքրքիր տեղեկություններ է պահել Գր. Կամախեցին, ըստ որի նա կաթողիկոս լինում է 1619 թվին։ Մականվամբ կոչել են Քացախ «Վասն ահարկու և խրոխտ զրուցատրութեան դոլոյն, որ էր ի նոյն երկրէն Կիլիկեցւոց ի Սիս քաղաքամիջէն...» (էջ 333)։ Քացախը մահացել է 1632 թ. (էջ 335)։ Ըստ Չամչյանի վերջինս Ղուկաս Կեղեցու աշակերտն էր («Պատմութիւն Հայոց», հ. Դ, էջ 519), մինչդեռ Գր. Կամախեցու համաձայն «...ի տիս մանկութեանն առ ոտս Յովաննէս (Անթափցի— Ա. Հ.) կաթողիկոսն էր սնեալ և վարժեալ» (էջ 333)։ Համաձայն Ալիշանի Մինաս Քացախը Սսի կաթողիկոսն է եղել 1627—1632-3 թ. թ. («Սիսուան», էջ 218)։

14. Այսինքն՝ 1633 թ. հունվարի 6-ին, մինչդեռ ըստ Ա. Դավրիժեցու Փիլիպպոս Աղբակեցին կաթողիկոս է օծվում 1633 թ. հունվարի 13-ին (էջ 316, 641։ Հմմտ. Սամ. Անեցու շար. էջ 178)։

15. Տեր Մկրտիչը Կարինի ավագ երեցն էր, որի մահից հետո հաջորդեց Հակոբ Կարնեցու հայրը՝ Գևորգը։ Հակոբ Կարնեցին իր հոր Գեորգի կենսագրության մեջ հիշում է, որ տեր Մկրտիչը մահացել է 1634 թ. հունվարի 6-ին։

16. Սույն նախադասությունը մեր կարծիքով նշանակում է, որ Մուրադ IV-ը 1635 թ. Վարդավառին (հուլիսի 15-ին) հասել է Կարին։ Մինչդեռ Համմերի կարծիքով Թուրքերը Կարինում լինում են 1635 թ. հուլիսի 10-ին, շարժվելով Երևան, նրանք յոթերորդ օրը, այսինքն հուլիսի 17-ին Կարսի առչև ճամբար են դրել („Geschichte des Osmanischen Reiches", dritter Band s. 148): Կարինի գրավման Հակոբ Կարնեցու վկայությունը մեզ հավանական է թվում, որովհետև այդ դեպքերի ժամանակ նա 17 տարեկան պատանի էր և ականատես դեպքերին։

17. Բնագրի «էառ զԵրևան Ը օրն» հատվածում հեղինակը հավանորեն ակնարկում է Երևանի նվաճումը օգոստոսի 8-ին 1635 թ.։ (Տես և հմմտ. «Ազգապատում», էջ 2433, J. Hammer „Geschichte des Osmanischen Reiches „dritter Band, s. 150): Սակայն Երևանի գրավման մասին XIII ժամանակագրությունը այլ տեղեկություն է տալիս։ Տես վերևում, էջ 196, 199, ծանոթ. 36։

18. Օրմանյանի հաշվումներով պարսիկները Երևանը գրավել են 1636 թ. սեպտեմբերին (նույն տեղ, էջ 2435)։ Տես և հմմտ. XIII ժամանակագրությունը, էջ 196։

19. Բնագրում սույն բառը գրված էր հապավված՝ «տրոր». նախընտրեցինք կարդալ «տեր-սեր» և ոչ «Տիրատուր»։

20. Հմմտ. «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Երևան, 1938, էջ 31։

21. Հմմտ. «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», էջ 32։

22. Մուտուրկը գյուղ է Կարինի գավառում։

23. Ըստ Ա. Դաւրիժեցու (էջ 439) և Զաքարիա Ագուլեցու (էջ 45) Փիլիպպոս կաթողիկոսը մահացել է 1655 թ., մարտի 25-ին։

24. Այսինքն՝ 1663 թ. սեպտեմբերի 22-ից մինչև 1664 թ. ապրիլի 10-ը։

25. Բնագրում «շփթեալ» ձևով։

26. Հեղինակը նկատի ունի Օնոփրիոսի խառնակություններն էջմիածնում (տես «Զաքարիա Դարկաւագի պատմագրութիւնք, հ. Բ, էջ 71—72։

27. Բնագրում «եղիաղարլու» ձևով։

28. Եղիաղարի և Հակոբ Ջուղայեցու միջև տեղի ունեցած պայքարի ժամանակ գործադրված կաշառքների մասին հետաքրքիր տեղեկություններ է տալիս ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը։ Տես և հմմտ. „Путешествие Шардена по Закавказью в 1672—1673 гг." Тифлис, 1902, стр 279, Հմմտ. նաև «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», էջ 66։

29. Հակոբ Ջուղայեցին իբրև 7 տարի մնացել է Կ. Պոլսում։ Այդ բանը հիշատակում է նաև ինքը, 1672 թ. օգոստոսի 28-ին լեհահայերին ուղղած կոնդակի մեջ. «... եօթն տարի է որ ի սուրբ աթոռոյս հեռացեալ՝ աւր ըստ աւրէ հաշիմք և մաշիմք ի տառապանս, և ոչ կարեմք աստի ելանել, զի մի կաշառօք աւերեցեն զուղղեալն մեր...» («Ալիշան «Կամենից», էջ 264)։ Տես և հմմտ. Սրուանձտեան «Թորոս աղբար», Բ մաս, էջ 398—410։

30. Սույն երկրաշարժի մասին պահվել է մի այլ տեղեկություն Մատենադարանի № 1773 ժողովածուի 430ա էջում. «Թվին ՌՃԺԶ (=1667) նոյեմբերի ԺԴ (14), յաւուր չորեքշաբթի, յիններորդ ժամու շարժ եղև ի Ցեղընկան քաղաքի, յառաջ ի խորոց անդընդոց գոռալոյ ձայն եկաւ, ապա յանկարծակի ի թարթելական շարժ եղև, բաղում շինուածք, տունք և մաշիթներ, և եկեղեցիք, և բաղանիքներ, փութկայներ, և քաղաքի պարիսպն և այլ շինուածք փլան և բաղում մարդիկք ոպանին զորոց որքանութիւնն աստուած միայն գիտէ»։

31. Սույն երկրաշարժի մասին դարձյալ պահվել է հետաքրքիր տեղեկություն. «Թվին ՌՃԺԷ (=1668) յունվար ամսոյ Դ (4) սաստիկ և ահագին շարժ եղև յամենայն սահմանս Ատրպատականի, ի յառաւօտուն մինչ զհարցի ժամն ասէաք։ Եղև թնդումն և զկնի նորին եկն շարժն և այնքան ուժգին եղև, մինչ զի կանթեղք և շահք, որք կախեալք էին յեկեղեցոյն ամենեքեան տարաբերեալք երթային և գային. և մարդիկք, որք ընդ երեսս որմոյ յեցեալք կանգնեալք կային ի տեղւոյն ի բաց ձգեաց. և եղև շարժս այս յԱրտաւել քաղաք, ի Թավրէզ, յԵրևան, ի Տփխիս, ի Գանջայ, ի Շամախի, ի Դամուրղափուն և յամենայն սահմանս իւրեանց։ Եվ յայսմ շարժմանէ Հախպատայ վանից եկեղեցոյ ներսի երեսէն որոմոյ քարինքն թափեցան և եկեղեցին, որում անուն Տեսանց ասէին, որ ի մէջ Հախպատայ և Ստնահնոյ կար շինեալ, բնաւին բլաւ։ Եվ ի Տփխիս քաղաքին մէկ նոր շինեալ եկեղեցոյ որմն և վերին բերդի որմն խախտեցաւ։ Իսկ Շամախի քաղաքն հիմն ի վեր լեալ ամենեւին տապալեցաւ, որ բնաւին ոչ մնաց շինուածք և անթիւ մարդիկք մեռան, զորոց զթիւն աստուած միայն գիտէ»։ (Ձեռ. № 1773, էջ 430ա և բ)։

32. Կեղի գյուղաքաղաք, որի անունով էլ կոչվում է գավառը։ Այն գտնվում էր 4-րդ Հայքում, հետո կոչվել է Խորձունեաց։ Հմմտ. Ա. Դաւրիժեցի, էջ 441։

33. Բնագրի 1ա, բ և 2ա էջերի ներքևի լուսանցքում գրված է՝ «Վասն հօրն մերում Գէորգա և վարուց նորին» ենթավերնագիրը։

34. Հանտերձու երկիրն արդյո՞ք պատմական Հանձիթը չէ։

35. Այսինքն 1606 թ.։ Տես վերևում, էջ 185—186։

36. Բնագրի 2բ և 3ա էջերի ներքևի լուսանցքում գրված է՝ «Վասն վարուց Գէորգա քահանային» ենթավերնագիրը։

37. Այսինքն՝ 1633 թ.։

38. Այսինքն՝ 1634 թ. հունվարի 6-ին։

39. Տես նաև վերևում, էջ 242։

40. Բնագրի 3բ և 4ա էջերի ներքևի լուսանցքում գրված է «Վասն վարուց Գէորգ քահանային և որդոյ նորա Մելքոնին» ենթավերնագիրը։